№ 113 ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 2 — 1904 — ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 2 № 113

ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻՉՈՂ ԱՐԾԱՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
Զօրաբանակների դիրքերը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Գանձակից. Նամակ Շուշուց. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Քաղաքական տեսութիւն.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Քաղաքացիական կանանց միջազգային կոնֆերենցիան։

ԶՕՐԱԲԱՆԱԿՆԵՐԻ ԴԻՐՔԵՐԸ

—

Աչքի առաջ ունենալով Պորտ-Արթուրի շրջանում պատրաստվող ընդհարումները, մենք մեր վերջին համարներում զբաղվեցինք այդ շրջանի վերաբերեալ մի շարք խորհրդածութիւններով։ Բայց պատերազմական բեմի միւս մասերումն էլ կատարվում էին փոփոխութիւններ, արժանի յիշատակութեան, որոնցով հետաքրքրված էր քաղաքական մամուլը։ Մենք կօգտվենք «Р. В.» հաղորդագրութիւններից՝ առաջ բերելով Լաօդունեան թերակղզու հիւսիսային և միջին մասերի վերաբերութեամբ էական տեղեկութիւններ։

Այդտեղ, ինչպէս հաղորդեցին և պաշտօնական հեռագիրները, տեղի ունեցան ռուսական և եապօնական առաջապահ զօրքերի մէջ արիւնահեղ ընդհարումներ, որոնք կանգնեցրին եապօնական զօրքերի առաջխաղացութիւնը։

Լաօդունի հիւսիսային և միջին մասերում այժմ աշխատում է հաստատվել եապօնական երկրորդ զօրաբանակը մարաջախտ Նօդզուի հրամանատարութեամբ։ Այդ զօրքը բռնել է մի սեծ տարածութիւն, որ ունի 120 վերստ երկարութիւն և 50 վերստ լայնութիւն։ Նրա մի ծայրը ծովեզրեայ Դակուշան քաղաքի մօտն է, իսկ սիւսը հասնում է սինչև Բիյզիվօ և Պուլանդեան քաղաքների հարաւում։

Նօդզունի զօրքը դեռ բաժան-բաժան է, որովհետև նաւերից ափ է իջել զանազան տեղերում։ Այժմ նա աշխատում է միացնել իր բոլոր մասերը և խտացնել նրանց, որպէս զի նա չենթարկվի առանձնակի յարձակումների և չը կրէ վտանգաւոր հարուածներ ռուսական զօրքի կողմից, որ սկսել է շարժումներ անել Լաօդունի արևմտեան մասերում։ Սակայն այն էլ կայ, որ Նօդզուն յոյս ունի ծայրայեղ դէպքերում աջակցութիւն ունենալ եապօնական միւս զօրաբանակներից, որոնք գործում են Կուրօկի և Օկու գեներալների հրամանատարութեան տակ։

Արդ՝ եապօնական երեք զօրաբանակները դասաւորված են այսպէս։ Առաջինը՝ Կուրօկիի հրամանատարութեամբ գտնվում է Ֆինխուանչէնում՝ Եալու գետի և Լաօեանի միջև։ Երկրորդ զօրաբանակը՝ Օկուի հրամանատարութեամբ բռնել է Կվանտունի թերակղզին և Պորտ-Արթուրի շրջանը։ Իսկ երրորդ զօրաբանակը, Նօդզուի հրամանատարութեամբ գտնվում է յիշված երկու զօրաբանակների միջև։ Երեք զօրաբանակներն էլ միմեանց հետ կապ ունեն և վտանգ եղած ժամանակ կարող են միմեանց աջակցել, ուստի հասկանալի է, որ զօրքերի թիւը այս և այն զօրաբանակում կարող է մեծանալ և փոքրանալ՝ նայած հանգամանքներին։

Եւրօպական մի քանի լրագիրների, ինչպէս օրինակ՝ «Times»-ի, «Berl. Lokal-Anzeiger»-ի հրատարակած հեռագիրներից երևում է, որ Եապօնիայից ուղարկվում են դէպի Մանջուրիա նորանոր զօրքեր, որոնցով կուժեղացնվեն եղած զօրաբանակները։ Թէ որքան հոգի զօրք կայ իւրաքանչիւր զօրաբանակում, լրագրական տեղեկութիւնները այդ մասին միատեսակ չեն և հաղորդած թուերը միայն ենթադրական են։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

—

Մայիսի 24-ին

«Մշակի» № 75 Գանձակից գրած մի թղթակցութիւն կար, որը վերաբերում էր տեղական արդիւնաբերութեան ամենանշանաւոր ճիւղին—գինեգործութեան ու գինու առևտրին։ Գինու գները տարէց տարի ընկնում են, հետևաբար և գինեգործութիւնը, որից Գանձակը գնալով պէտք է հարստանայ, դառնայ մի երկրորդ Տօկա կամ Բորդօ, անշահաւէտ գործ է դառնում, թղթակցի ասելով։ Նա վերագրում է այդ այգիների տարածութեան ընդարձակման, մի բանի, որ կատարվում է համարեա բացառապէս գերմանացիների շնորհով։ Նա այդպիսի կուլտուրական գործը, չոր-ցամաք դաշտերին կենդանութիւն տալը, նրանց արդիւնաբերութեան, հարստութեան աղբիւր դարձնելը, տեղական շահերի տեսակէտից անցանկալի երևոյթ, համարեա չարիք է համարում։

Այդպիսի պառաւական գանգատները սովորական են մեր քնաթաթախ, անշարժ, եռանդազուրկ Գանձակում։ Շատերը մեր քաղաքացիներից անչափ երջանիկ կը համարէին իրանց, եթէ Գանձակի ամբողջ այգեգործական շրջանում գոյութիւն ունենային միմիայն հինաւուրց «Զորի բաղերը», որպէս զի առանց քրտնելու, առանց ոյժ-եռանդ լարելու, առանց կատարելագործելու այգիների մշակումն ու գինեգործութիւնը կարողանային գինու վեղրոն 3—4 ռուբլով ծախել։ Այդ ընորոշ վաշխառուական իդէալ է, որ ձգտում է քիչ դրամագլխով մեծ փող վաստակել, մեծ տոկոսներ շահել։ Եթէ Գանձակի այգիների տարածութիւնը 200—300 դեսեատին հազիւ լինէր, նրանց տէրերն անշուշտ շատ երջանիկ կը լինէին՝ թէ գինին և թէ խաղողը թանգ գներով կը ծախվէին ու մի քանի տասնեակ այգետէրերի կը հարստացնէին ու կերջանկացնէին անչափ, ինչպէս եղել է մի 30—40 տարի առաջ։ Այն ինչ այժմ հազարաւոր մարդիկ (հաշուելով գերմանացիներին ևս) Գանձակի այգեգործական շրջանում կերակրվում են այգեգործութեամբ ու գինեգործութեամբ։ Շնորհիւ այգիների տարածութեան անընդհատ ընդարձակման, տարէց տարի այդ կերակրվողների թիւը աւելանում է։ Հարիւրաւոր գիւղացիներ գաւառի զանազան գիւղերից՝ գարնան ու աշնան ամիսներում պարապմունք են գտնում Գանձակի ու գերմանաբնակ Ելենենդորֆի, մանաւանդ վերջինի, այգիներում։ Զարմանալի չի լինի, եթէ ասեմ, որ Ելենենդորֆ գիւղը իր այգեգործութեամբ, որ տարէց տարի զարգանում, առաջադիմում, ընդարձակվում է անընդհատ, տարվայ մէջ առնուազն վեց ամիս պարապմունք է տալիս տասնեակ հայ գիւղերի։ Յայտնի գերմանացի գիւղատնտես Կրիստոֆ Ֆօրէրի Ղարաբերի (գտնվում է Գանձակից դէպի հիւսիս, դէպի Կուր գետը տարածվող հարթավայրի վրա) վիթխարի այգին միմիայն 200—300 բանւոր է զբաղեցնում և այդ հաստատեա անընդհատ ամբողջ տարվայ ընթացքում։

—Ո՞ւրտեղ ես բան անում,—հարցնում ես գիւղացուն։

—Ղարա-Երումը, Քրիշտոֆի բաղումը։

—Մարդ շատ ա բանեցնում։

—Շատ. նրա հօրն օղորմի. մեր գեղը նա ա պահում. որ վախտ պարապ ենք մնում, գնում ենք կուշտը, ձեռաց բան ա տալիս։ Լէմսի բաղում բանը միշտ կայ ու կայ։

Նոյնպիսի օգուտ ստանում են գիւղացիները նաև իշ. Գօրչակօվի ընդարձակ այգուց, որ գտնվում է նոյն Ղարա-Երի շրջանում։

Այգիների տարածութեան ընդարձակումն ու հազիւ լինէր, նրանց տէրերն անշուշտ շատ երջանիկ կը լինէին՝ թէ գինին և թէ խաղողը թանգ գներով կը ծախվէին ու մի քանի տասնեակ այգետէրերի կը հարստացնէին ու կերջանկացնէին անչափ, ինչպէս եղել է մի 30—40 տարի առաջ։ Այն ինչ այժմ հազարաւոր մարդիկ (հաշուելով գերմանացիներին ևս) Գանձակի այգեգործական շրջանում կերակրվում են այգեգործութեամբ ու գինեգործութեամբ։ Շնորհիւ այգիների տարածութեան անընդհատ ընդարձակման, տարէց տարի այդ կերակրվողների թիւը աւելանում է։ Հարիւրաւոր գիւղացիներ գաւառի զանազան գիւղերից՝ գարնան ու աշնան ամիսներում պարապմունք են գտնում Գանձակի ու գերմանաբնակ Ելենենդորֆի, մանաւանդ վերջինի, այգիներում։ Զարմանալի չի լինի, եթէ ասեմ, որ Ելենենդորֆ գիւղը իր այգեգործութեամբ, որ տարէց տարի զարգանում, առաջադիմում, ընդարձակվում է անընդհատ, տարվայ մէջ առնուազն վեց ամիս պարապմունք է տալիս տասնեակ հայ գիւղերի։ Յայտնի գերմանացի գիւղատնտես Կրիստոֆ Ֆօրէրի Ղարաբերի (գտնվում է Գանձակից դէպի հիւսիս, դէպի Կուր գետը տարածվող հարթավայրի վրա) վիթխարի այգին միմիայն 200—300 բանւոր է զբաղեցնում և այդ հաստատեա անընդհատ ամբողջ տարվայ ընթացքում։

—Ո՞ւրտեղ ես բան անում,—հարցնում ես գիւղացուն։

—Ղարա-Երումը, Քրիշտոֆի բաղումը։

—Մարդ շատ ա բանեցնում։

—Շատ. նրա հօրն օղորմի. մեր գեղը նա ա պահում. որ վախտ պարապ ենք մնում, գնում ենք կուշտը, ձեռաց բան ա տալիս։ Լէմսի բաղում բանը միշտ կայ ու կայ։

Նոյնպիսի օգուտ ստանում են գիւղացիները նաև իշ. Գօրչակօվի ընդարձակ այգուց, որ գտնվում է նոյն Ղարա-Երի շրջանում։

Այգիների տարածութեան ընդարձակումն

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ [1]) ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՕՆՖԵՐԵՆՑԻԱՆ

(Նամակ Գերմանիայից)

—

Գերմանիայի մայրաքաղաքը սիրալիր հիւրընկալութիւն է ցոյց տալիս գեղեցիկ սեռի միջազգային առաջաւոր ներկայացուցիչներին։ Կանանց շարժման տեսակէտից դեռ այն աստիճան մանուկ ու խակ բանակը՝ գերմանական ազատագիր կանանց, չանք չէ խնայել փառահեղ ընդունելութիւն ցոյց տալու իր միջազգային կուսակից-դաշնակիցներին։ Քաղաքակիրթ երկրների բոլոր ծայրերից, մանաւանդ Ամերիկայի Միացեալ-Նահանգներից, Աւստրալիայից, Անգլիայից—ամենաառաջադէմ երկրները կանանց շարժման խնդրում—Բերլին են շտապել բազմաթիւ ականաւոր ոյժեր։

Նախ քան քաղաքացիական կանանց միջազգային կօնգրէսի կայանալը (յունիսի 12—18), տեղի ունեցաւ յունիսի 3—5-ին Բերլինում համախմբված նոյն միջազգային կին ներկայացուցիչների կօնֆերենցիան—կանանց ընտրողական իրաւունքի խնդիրը քննելու համար։ Այս կօնֆերենցիան իր տեսակում համարվում է երկրորդը (առաջինը եղել է Վաշինգտօնում 1902 թ.)։ Ընտրողական իրաւունքի միջազգային կենտրօնական կօմիտէն գտնվում է Ամերիկայում (Չիկագօ), որի առաջարկութեամբ Բերլինում կայացած կօնֆերենցիան պիտի կազմակերպէր կանանց մի համաշխարհային միութիւն՝ բացառապէս ընտրողական իրաւունքի սահմանում։

Ընտրողական իրաւունք, պարլամենտական ներկայացուցչութիւն, քաղաքական ոյժ ու ազդեցութիւն—այդ վերին աստիճանի կարևոր, սակայն և դժուար իրականացնելու խնդիրն է, որ կազմում է առհասարակ կանանց էմանսիպացիայի դժուարակնճիռ հանգոյցը, և որի լուծմամբ, ըստինքեան կը բացվեն շատ ու շատ փակ դռներ։ «Որ և է բասայի, դասակարգի կամ սեռի սօցիալական կախումն ու ենթակայութիւնը—իրաւամբ նկատում է Աւգուստ Բեբելը—ստանում է միշտ իր արտայայտութիւնը տեղական երկրի օրէնքների և քաղաքական հաստատութիւնների մէջ։ Օրէնքները ուրիշ ոչինչ չեն, բայց եթէ յօդուածներով ձևակերպված արտայայտութիւններ, որոնք վերաբերում են երկրի այս կամ այն շահերին։ Կանայք, որպէս անինքնուրոյն և ճնշված սեռ, գտնում են դրա հաստատասխան իրանց իրաւական դիրքը՝ արտայայտված այս կամ այն երկրի օրէնքների մէջ» [2])։

Կանանց ընտրողական իրաւունքի միջազգային կօնֆերէնցիան իր ձեռքի տակ ունենալով Միացեալ-Նահանգների նոյն կարգի ընկերութեան (իր տեսակում ամենահինը) ծրագրային որոշումները, մշակել է ներկայ նիստերում հետևեալ կէտերը։

1. Տղամարդիկ և կանայք ծնվել են հաւասար և ազատ, որպէս մարդկային ընկերութեան ինքնուրոյն անդամներ։ Նրանք հաւասարապէս օժտված են բանականութեամբ և ընդունակութեամբ, և իրաւունք ունեն հաւասարապէս տիրանալու քաղաքացիական իրաւունքների։

2. Սեռերի բնական յարաբերութիւնները կայանում են փոխադարձութեան և համօրինակ ձգտումների մէջ։ Իսկ սեռերից մէկն ու մէկի ազատութեան և իրաւունքի ճնշումը՝ վնասում է անխուսափելի կերպով միւսին և դրա հետ միասին՝ ամբողջ մարդկութեան։

3. Զանազան երկրների այն բոլոր օրէնքները, սովորութիւններն ու վարք ու բարքը, որոնք նպատակ ունեն կնոջ դիրքը կախման և ենթակայութեան մէջ պահել, նրանց կրթութիւնը սահմանափակել, խանգարել բնական ձիրքերի զարգացման և նրանց անձնաւորութիւնը ճնշել—հիմնված են սխալ ու թիւր նախապայմանների վրա և արդի հասարակական կազմակերպութեան շրջանում՝ տուել են երկու սեռի յարաբերութիւններին միանգամայն արհեստական և անարդար գոյն ու կերպարանք։

4. Ինքնորոշումը և ինքնապատասխանատուութիւնը՝ տանը թէ պետութեան մէջ, կազմում է իւրաքանչիւր հասունացած և նորմալ մարդու անփոխարինելի իրաւունքը. հետևապէս պարտաւոր չէ ոչ անհատ կինը անհատ տղամարդուն և ոչ կանանց ամբողջութիւնը՝ տղամարդկանց ամբողջութեան, որոնք տիրում են օրէնսդրութեան իրաւունքին, հնազանդվելու, ենթարկվելու։

5. Կանանց ստորացումը՝ մինչև հասարակութեան ամենացածր և ինքնուրոյնութիւնից զուրկ անդամների շարքը, համարվում է մի այնպիսի սօցիալ—օրինական և տնտեսական անարդարութիւն, որ շարունակ նպաստել է տնտեսական ճգնաժամի զօրեղանալուն։

6. Իւրաքանչիւր կառավարութիւն, որ կին քաղաքացիներին օրինապէս ենթարկում է հարկաւորութեան սիստեմին, առանց իրաւունք շնորհելու նրան իր շահերի պաշտպանութեան համար,—գործադրում է մի այնպիսի բռնապետութիւն, որ միանգամայն դուրս է արդարութեան բոլոր սահմաններից։

7. Ընտրողական ձայնատուութեան իրաւունքը միակ միջոցն է՝ անձնական և դասակարգային իրաւունքներն ու շահերը պաշտպանելու համար, ինչպիսին Ամերիկայի անկախութեան կուից յետոյ անձեռնմխելի կերպով հաստատվել և բոլոր արդի քաղաքական կազմակերպութիւններից ճանաչվել է։ Այդ պատճառով պէտք է բոլոր սահմանադրական կազմակերպութիւն ունեցող երկրները շնորհեն տին հազիւ լինէր; նրանց տէրերն անշուշտ շատ երջանիկ կը լինէին՝ թէ գինին և թէ խաղողը թանգ գներով կը ծախվէին ու մի քանի տասնեակ այգետէրերի կը հարստացնէին ու կերջանկացնէին անչափ, ինչպէս եղել է մի 30—40 տարի առաջ։ Այն ինչ այժմ հազարաւոր մարդիկ (հաշուելով գերմանացիներին ևս) Գանձակի այգեգործական շրջանում կերակրվում են այգեգործութեամբ ու գինեգործութեամբ։ Շնորհիւ այգիների տարածութեան անընդհատ ընդարձակման, տարէց տարի այդ կերակրվողների թիւը աւելանում է։ Հարիւրաւոր գիւղացիներ գաւառի զանազան գիւղերից՝ գարնան ու աշնան ամիսներում պարապմունք են գտնում Գանձակի ու գերմանաբնակ Ելենենդորֆի, մանաւանդ վերջինի, այգիներում։ Զարմանալի չի լինի, եթէ ասեմ, որ Ելենենդորֆ գիւղը իր այգեգործութեամբ, որ տարէց տարի զարգանում, առաջադիմում, ընդարձակվում է անընդհատ, տարվայ մէջ առնուազն վեց ամիս պարապմունք է տալիս տասնեակ հայ գիւղերի։ Յայտնի գերմանացի գիւղատնտես Կրիստոֆ Ֆօրէրի Ղարաբերի (գտնվում է Գանձակից դէպի հիւսիս, դէպի Կուր գետը տարածվող հարթավայրի վրա) վիթխարի այգին միմիայն 200—300 բանւոր է զբաղեցնում և այդ հաստատեա անընդհատ ամբողջ տարվայ ընթացքում։

—Ո՞ւրտեղ ես բան անում,—հարցնում ես գիւղացուն։

—Ղարա-Երումը, Քրիշտոֆի բաղումը։

—Մարդ շատ ա բանեցնում։

—Շատ. նրա հօրն օղորմի. մեր գեղը նա ա պահում. որ վախտ պարապ ենք մնում, գնում ենք կուշտը, ձեռաց բան ա տալիս։ Լէմսի բաղում բանը միշտ կայ ու կայ։

Նոյնպիսի օգուտ ստանում են գիւղացիները նաև իշ. Գօրչակօվի ընդարձակ այգուց, որ գտնվում է նոյն Ղարա-Երի շրջանում։

Այգիների տարածութեան ընդարձակումն

կանանց ընտրողական բոլոր իրաւունքներն ու քաղաքացիական արտօնութիւնները։

8. Կնոջ մասաւոր կեանքի արագ զարգացումը, ինչպիսին տալիս է նորագոյն կրթութիւնը, կնոջ հետզհետէ աճող կենցաղական դիւրութիւնները պայմանաւորված են՝ այս կամ այն սահմանում աշխատանքի աղբիւր ունենալու օրէնքներով, կնոջ աշխատանքի բարձրացող նշանակութեամբ՝ որպէս հետևանք արդիւնաբերութեան նոր եղանակի, բոլոր քաղաքակիրթ ժողովուրդների մէջ կանանց մասնակցութեամբ՝ հանրօգուտ, սօցիալական և քաղաքական գործունէութեան մէջ. պայմաններ, որ կաթեդրիական պահանջ են դնում՝ քննելու արդարացի հիմունքներով կնոջ իրաւական դիրքը։

Սրանք են այն ամփոփ ու համառօտ ձևով արտայայտված առաջնորդող գաղափարները, որոնց հիմնական սկզբունքների վրա խարսխվում է այսօր՝ կանանց միջազգային երկրորդ կօնֆերենցիայում, նրանց համաշխարհային միութիւնը (weltbund), նպատակ ունենալով իր «միջազգային կազմակերպութեամբ» և «հաւաքական գործակցութեամբ» իրականացնել կին սեռի «իրաւական-քաղաքական ձգտումները՝ օրէնսդրական-վարչական սահմանում»։ Ուրեմն այս միութիւնը կազմում է մի օղակ կանանց այն ընդհանուր շարժման միջազգային դաշնակցական կազմակերպութեան, որի առիթով պիտի մի ամբողջ շաբաթ շարունակ տեղի ունենայ առաջիկայ միջազգային կօնգրէսը։

Կանանց համաշխարհային միութեան մասնակցել են այժմեանից իսկ հետևեալ երկրների կանանց ընկերութիւնները. Ամերիկայի Միացեալ-Նահանգները, Անգլիան, Գերմանիան, Հոլանդիան, Շվեդիան, Նորվեգիան, Դանիան և Շվեյցարիան։ Բացի կանանցից կարող են միութեան անդամ լինել և տղամարդիկ։

Բ. Իշխանեան

Բերլին.

---

[1]) Թիւրիմացութեան տեղիք չը տալու համար դիտմամբ գործ ենք ածում քաղաքացիական (bürgerliche) բառը, որպէս զի հակառակ դէպքում կօնֆերենցիայի և կօնգրէսի տակ չը հասկացվի և պրօլետարական կանանց շարժման մասնակցութիւնը, որ իրապէս գործունէութեան այլ ծրագիր ունի։

[2]) «Die Frau und der Socialismus» 34 հրատ. եր. 265—266։

այդպիսով օգտաւէտ է նախ հանրային շահերի տեսակէտից. գաւառի գիւղական բանուորները հաստատ պարապմունք են գտնում այդ այգիներում։ Դրանով հարիւրաւոր մարդիկ ոչ միայն մի կտոր հաց են վաստակում իրանց համար, այլ և փրկվում են Բագուի դժոխային մթնոլորտից, ուր նրանք կը գնային անշուշտ, եթէ տեղական արդիւնաբերութեան այդպիսի ճիւղ չը լինէր, եթէ խսպառ պարապ մնային, եթէ Գանձակի շրջանի հրաշալի հողի վրա գոյութիւն ունենային միմիայն Զաւադ-խանի սիրելի զբօսավայր «Զորի բաղերը»։

Այգիների ընդարձակումը օգտաւէտ է ամենից շատ իրանց՝ ընդարձակողներին—ժրաջան, կուլտուրական եռանդուն գերմանացիներին, որոնք ոչ միայն ընդարձակում են իրանց այգիները, չոր-ցամաք դաշտերը վազան թփերով ծածկելով, անապատը դրախտ դարձնելով, այլ և գնում են այն գանձակեցիների այգիները, որոնք երաշում են 3—4 ռուբլիանոց վեդրոյի մասին ու հեշտութեամբ այդ իդէալին չը հասնելով, չը ձգտելով ընդարձակել գործը ու կատարելագործել նրան, ծախում են իրանց տոհմական հարստութիւնը, ուտում, մաքրազարդում են ստացած դրամագլուխը, կամ նետվում են Շէյթան-բազարն ու բազաղխանան ու նուիրվում մանր առևտրին, այլ կերպ ասած՝ չօտկի ու արշինի պաշտամունքին։ Գերմանացու հետ մրցել նրանք բնաւ չեն ցանկանում, չեն ձգտում. նրա պէս ճիգեր չեն թափում գործի առաջադիմութեան համար։ Հողից փախչելը մի ընդհանրական, համատարած ախտ է դարձել մեզանում՝ թէ քաղաքներում և թէ գիւղերում. այդ ախտը խիստ աչքի է ընկնում Գանձակում։ Այն հրաշալի վայրերը, որոնք այժմս գերմանացիների ձեռքին են, դեռ շատ առաջուց, մինչև նրանց մեր երկիրը գալը, կարող էին տեղացիների ձեռքին լինել, եթէ վերջիններս զուրկ չը լինէին եռանդից, հեռատեսութիւնից ու համերաշխ, ձեռք ձեռքի տուած գործելու ընդունակութիւնից։

Տարիների ընթացքում գերմանացիները հաւաքական ոյժով հողեր են ձեռք բերել ու այգիներ շինել, հաւաքական ոյժով արխեր, ջրանցքներ են անցկացրել ու այլ հանրօգուտ գործեր կատարել ու այժմ էլ կատարում են անընդհատ, սակայն նրանց եռանդը չէ սպառվում բնաւ, իսկ մերոնցից հաւաքական ոյժը, համերաշխութեան ոգին եղել է միշտ ու է չինական պատով բաժանված։ Գերմանացիները ընդարձակում են այգիները ու կատարելագործում թէ նրանց մշակումը և թէ գինեգործութիւնը։ Ինչքան էլ ընկնի գինու գինը, նրանց եռանդը չէ թուլանում, նրանք չեն յուսահատվում ու ձեռքերը ծալած չեն նստում. նրանք աշխատում են ու աշխատում, և նրանց խելացի աշխատանքը վարձատրվում է միշտ ըստ արժանւոյն. անցեալ 1903 թ. գերմանացի այգետէրը իր այգու մի դեսեատինից ստացել է 700 մինչեւ 1000 վեդրո գինի. գանձակեցի այգետէրը (լաւ մշակողը) 300 մինչև 500 վեդրո։ Սովորական է մեզանում լսել՝ «Լէմսը իր բաղից երկու ա ստանում, իսկ հայն ու թուրքը մին»։

—Պատճառն ի՞նչ է,—հարցում ես։

—Նրանք բաղը լաւ են շինում, ֆանդ ու ֆունդ շատ են գիտում, վազան լեզուն լաւ են հասկանում,—լսում ես պատասխան։

Մանրամասնութիւններն աւելորդ են. պէտք է գանձակեցին էլ ձգտէ, աշխատէ, ոյժ, եռանդ գործ դնէ, գիտութիւն ձեռք բերէ՝ «վազան լեզուն» լաւ հասկանալու համար, որպէս զի կարողանայ իր այգիները իր կուլտուրական հարևանի պէս իր համար ապրուստի հաստատ միջոց, հարստութեան մշտական, անսպառ աղբիւր դարձնել։

Գերմանացիները ընդարձակելով իրանց այգիները, սպառում են Գանձակ գետից որոշ քանակութեամբ ջուր, վերջին տարիներս հայերից ու թուրքերից աւել, բայց դրանով ջրի ընդհանուր քանակութիւնը այնքան չէ նուազում, որ տեղացիները անկարող լինեն ընդարձակել իրանց այգիները, եթէ ցանկութիւն ու եռանդ լինի, մանաւանդ եռանդ, այդ անելու, ջրի կողմից արգելք չի լինի։ Ծայրայեղ դէպքում եթէ կարելի է գետի վերի հոսանքում ջրամբարներ շինել, ինչպիսի փորձ եղել է 70-ական թուականներին, գերմանացիների նախաձեռնութեամբ, Ելենենդորֆ գիւղից բարձր, «Աղբորփի» ասած տեղում. գործը սկսվել է, փող բաւականին ծախսվել է (ջրամբարի պատերի մնացորդները գետի հունում այժմս էլ երևում են), բայց գլուխ չէ եկել շնորհիւ մեր այգետէրերի աճեմարաշխութեան։ Այդպիսի գործը պէտք է գլուխ գար քաղաքացիների ու գերմանացիների հաւաքական ոյժերով, քանի որ ջրամբարը բոլորի՝ տեղական ամբողջ ազգաբնակութեան համար էր շինվում։ Գերմանացիները միշտ մտածել ու այժմս լուրջ մտածում են այդպիսի ջրամբարների կառուցման մասին։ Եթէ քաղաքացիները նրանց հետ համերաշխ լինեն, գործեն ձեռք ձեռքի տուած ու եռանդով, գործը հեշտութեամբ գլուխ կը գայ, ու Գանձակի շրջականերում հարիւրաւոր դեսեատիններ, որոնք այժմս անապատ են կեանք ու կենդանութիւն կը ստանան։ 1899 թ. սկսած ջրի պակասութիւն մեր գետում համարեա չէ զգացվում, ջրային վարչութիւնը գետի ջրից օգտվելը բաւականին կանոնաւորել է։

Եթէ գինու առևտուրն ընկած է մեզանում, այդ շնորհիւ արտահանող ընկերակցութիւնների կատարեալ բացակայութեան է։ 90-նական թուականներին գինեգործների ընկերութիւն կազմելու մի լուրջ փորձ եղաւ, բայց վերջի-վերջոյ անաջող։ Գործն սկսվեց ու մեռաւ իր սաղմում. մեր գինեգործները իրար չը հաւատացին. վախեցան իրարից, կարծեցին, թէ գործի ղեկավարները միւսների տները կը քանդեն՝ օգուտը սեփականացնելով, իսկ իրանց վնասներ ցոյց տալով։ Ֆօրէրը, որ տարին մի քանի տասնեակ հազար վեդրո գինի է ամբարում, չէ գանգատվում առևտրի անկումից, պահանջի բացակայութիւնից, բոլոր գերմանացիներն ու գանձակեցի մի քանի խոշոր այգետէրեր սպասում, վաճառում են իրանց գինին, քանի որ ոյժ, նիւթական միջոցներ ու առևտրական աշխարհում կապեր ունեն՝ իրանց գործը աջողութեամբ տանելու համար. իսկ մեր միջակ ու մանր այգետէրերը՝ առանձնակի գործելով ու զուրկ լինելով խոշոր նիւթական միջոցներից, ձեռքերը ծալած նստում են ու սպասում, որ օտար տեղերից գնողներ գան իրանց գինիների համար։ Գնողները երբէք չեն գալիս, գինու գներն էլ ընկնում են։ Այդպէս չէր լինի, եթէ այգեգործների ու գինեգործների ընկերակցութիւններ լինէին մեր քաղաքում, եթէ հաւաքական ոյժով գործելը սովորութիւն դառնար մեզանում։

Ստ. Տէր-Աւետիքեան

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

—

Մայիսի 27-ին

Դումայի դահլիճում մայիսի 18-ին նշանակված էր ներկայ տարվայ V-րդ հերթական նիստը, որի շարունակութիւնը եղաւ երէկ, մայիսի 26-ին։

Յունիս ամսվայ սակագինը հացի համար որոշեցին թողնել նոյնը՝ 3—4 կոպէկ ֆունտը, իսկ մսի համար իջեցրին՝ ոչխարինը 10 կոպ., իսկ տաւարինը 8 կոպէկ։

Նշանակված էին մի քանի լրացուցիչ ընտրութիւններ զանազան մասնաժողովների համար, սակայն դուման, ի նկատի առնելով եկող տարվայ ձայնաւորների նոր ընտրութիւնները, աւելորդ չը համարեց յետաձգել այդ ընտրութիւնները եկող տարվան։

Մարիամեան օրիորդաց ուսումնարանի վարչութեան խնդրանօք, դուման ձեռնարկեց նոյն դպրոցի հոգաբարձական խորհրդի համար երկու անդամի ընտրութեան. ընտրվեցին բժիշկ Միխմանդարեան և Մ. Իւզբաշեանց։

Քաղաքագլխի տեղապահ ընտրվեց վարչութեան անդամ Քալանթարեան։

Քաղաքի նախահաշիւը չը հաստատեց նահանգական ատեանը ներկայ 1904 թ-ի համար. առաջարկված է կրճատել ծախսերը, ի նկատի ունենալով քաղաքի սուղ միջոցները։

Նոյն ատեանը հաստատել է քաղաքումս եղէկտրական լուսաւորութիւն մտցնելու և ձիաքարշ երկաթուղի անցկացնելու խնդիրները։ Վճռվեց զինուորական հիւանդանոցը Ամբրումեանի տնից տեղափոխել Ասկերովի տունը 1000 ր. վարձով։

Կարդացվեց Գր. Արաքելեանի Թիֆլիսից ստացած հետևեալ հեռագիրը. «Ի նկատի ունենալով, որ շուտով պիտի մեկնեմ արտասահման, ուստի ցանկանում եմ յանձնել քաղաքային վարչութեան ըէալական դպրոցը կառուցանելու հաշիւները»։

Դուման, ձայների մեծամասնութեամբ, ընտրեց քաղաքագլուխ Զ. Սաֆար-Ալիբէկովին և ինժենէր Զանումեանցին, որոնք շուտով պիտի մեկնեն Թիֆլիս պ. Արաքելեանի հետ բանակցութեան մէջ մտնելու։

Շուտով պիտի տեղի ունենան նոր ձայնաւորների ընտրութիւնները եկող 1905 թ-ից 4 տարի ժամանակով։ Թող պատուաւոր կերպով հրաժարվեն այն մարդիկ, որոնք միշտ բացակայում են քաղաքից, այն մարդիկ, որոնք այս քառամեակին Զաքարիայի պապանձումն են գերադասել, հակառակ դիպուածում ստիպված կը լինենք այդպիսիների անունները մամուլի միջոցով երևան հանելու։ Չեմ խօսում թիւրք ձայնաւորների մասին, որոնք նիստի ժամանակ իրանց փափախներով միմեանց բուրնուքի են առաջարկում, կամ քուրսի (աթոռ) նստելու համար, կամ թէ պահանջում են, որ թարգմանեն թէ վարչութեան վճիռները կամ թէ ձայնաւորների վիճաբանութիւնները։ Թող երևան գայ եղած չեղածից ինտելիգենցիան և ըստ չափու ազատէ քաղաքս իր ընկած դրութիւնից...

Ամարային հասարակաց ժողովարանի նոր շէնքը հաստատ պատրաստ է։ Շուտով կը տեղափոխվեն այնտեղ։ Եղանակները գարնան անձրևային անցան, իսկ մայիսի 20-ից սկսվել են մայիսեան գեղեցիկ և հրաշալի օրեր...

Ցանքսերը առատ բերք են խոստանում։

Ռէալական դպրոցի քննութիւնները կը վերջանան յունիսի 4-ին։ VII-րդ դասարանից աւարտում են բոլոր 32 հոգին, իսկ VI-դից 32 հոգուց 27 հոգի. մեծամասնութիւնը հայերն են կազմում։

Սկսվել է ամարանոց եկողների հոսանքը։

Արցախեցի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ հաղորդում են, որ ներկայումս Թիֆլիսումն է գտնվում երաժշտագէտ, հոգեկան հիւանդ Մ. Եկմալեան, որը տեղափոխվել է իր հայրենի Վաղարշապատ գիւղից եղբօր հետ միասին։ Վերջին երկու տարին Մ. Եկմալեան այնտեղ էր ապրում։ Նրա այժմեան վիճակը, համեմատած հիւանդութեան առաջին շրջանի հետ, աւելի բաւարար է, հիւանդը իրան հանգիստ է պահում և առաջարկած հարցերին նա երբեմն կարգին է պատասխանում, երբեմն ցրված ու կցկտուր։ Մ. Եկմալեան ֆիզիքապէս առողջ է երևում։ Դալով նրա մտաւոր կարողութեանը. պէտք է ասել, որ բաւական թոյլ է. հարկաւոր է հմուտ և մասնագէտ բժիշկների օգնութիւնը նրա հիւանդութեան բժշկութեան գործում. այս ամառ մտադիր են նրան տանել Թիֆլիսի մերձակայ ամարանոցներից մինը օդափոխութեան։

—

Անդրկովկասում բամբակի մշակութիւնն աւելի զարգացնելու համար, երկրագործութեան մինիստրութիւնը եղած շրջող ինստրուկտորների թիւն աւելացնում է 2 նոր ինստրուկտորներով. դրանցից մէկը նշանակվում է Երևանի, միւսը Բագուի նահանգներում։

—

Շուշի գնալու ցանկութիւն ունեցողներն ամեն տարի՝ ամառը բացվելու ժամանակները՝ սրտի թրթիռով սպասում են, թէ արդեօք գետերը վարարել են... Որ և է 105 վերստ տարածութեան վրա (Եւլախից-Շուշի) կայ երեք գետ։ Երեքն էլ գարնան վերջին վարարվում են երբեմն ահագին չափերով։ Կամուրջ չը կայ ոչ մէկի վրա—ոչ Թարթառի, ոչ Խաչենագետի և ոչ էլ Խօջալուի գետի վրա։ Այժմ էլ սաստիկ վարարված են այդ գետերը, մանաւանդ Խաչենայ ջուրը։ Յաճախ քշում են դրանք կենդանիներ, մարդիկ, կառքեր... Շուշեցիների դրամագլուխները թափառում են Կովկասում ու Կովկասից դուրս, իսկ այդ 105 վերստ տեղը չը կարողացան երկաթուղի շինել։

—

Շրջիկ կաթնարանը, որ մայիս ամսվայ ընթացքում գործում էր Կարսի գաւառում, շուտով կը տեղափոխվի Ալէքսանդրօպոլի գաւառը և կայցելէ լեռնանիստ գիւղերը։ Առաջիկայ կիրակի օր, յունիսի 6-ին, Ալէքսանդրօպոլում, քաղաքային վարչութեան դահլիճում, կը կայանան երկու գործնական դասախօսութիւններ կաթնատնտեսութիւնից գիւղացիների և քաղաքացիներից հետաքրքրվողների համար։

—

Պ. Դաւիթ Արամեանց ահա չորս տարի է, որ իր կողմից ձրիապէս մի օրինակ «Մշակ» ուղարկում է Շուշի գաւառի Քեաթուկ գիւղը։ Այս տարի ևս նա ուղարկել է մեզ տասն ռուբլի նոյն նպատակով։

—

1903 թ-ին Կովկասում արդիւնաբերվել է. 635,481,565 պուդ նաւթ, 3,088,923 պուդ քարածուխ, 23,076,903 պուդ մարգանեցի հանք, 137,500 պուդ ծծումբ, 1,669,367 պուդ արծաթա-արճճային հանքեր, 3,147,437 պուդ աղ, 6,212,197 պուդ պղնձի հանքեր, և հալված է 262,918 պուդ պղինձ։

—

"Чер. Поб." լրագրի ասելով, Սև ծովի բոլոր ափերի վրա գործերի կանգ առնելն ազդեցել է Նովոռոսիյսկի վրա էլ, ուր՝ վաճառականների ասելով, առևտուրը երկու անգամ պակասել է։

—

Կիևի համալսարանում հետևեալ տարվանից մտցնվում է մանկավարժութիւն և մեթոդաբանութիւն։ Այդ առարկաներից դասախօսութիւն են կարդալու, ինչպէս ասում է „Кур." լրագիրը, լեզուաբանութեան, մաթեմատիկայի և բնագիտական առարկաներ սովորող այն ուսանողների համար, որոնք դիտաւորութիւն ունեն իրանց նուիրելու մանկավարժական ասպարէզին։

—

„Ниж. Лист." լրագիրը հաղորդում է, որ ականաւոր ռուս գրող Ի. Պոտապենկօն ձեռք է բերել „Живописное Обозрѣніе" շաբաթաթերթը, որը ներկայ տարվայ սեպտեմբերի կէսերից կը սկսէ հրատարակվել։

—

Անցեալ օրերը Օդեսսայի լրագիրներից քաղելով հաղորդել էինք, որ ռուս երիտասարդ գրող Ա. Պ. Չեխովը գնում է Հեռաւոր Արևելը, պատերազմի վայրը։ Բայց այժմ „Рус. Вѣд." լրագիրը հաղորդում է, որ Չեխովը Մոսկվայումն է, բաւական տկար է և պատրաստվում է գնալ արտասահման բժշկվելու։

—

ԱԽԱԼՑԽԱՅԻՑ մեզ գրում են. «Քաղաքիս շրջակայ մի քանի գիւղեր, ինչպէս՝ Ծուղրութ և այլն, եղջիւրաւոր կենդանիների մէջ տարածվել է ժանտախտ կոչված հիւանդութիւնը։ Տեղական իշխանութիւնը սկսել է լուրջ հսկողութիւններ անել նրա տարածման առաջն առնելու։ Անցեալ օրերը գաւառական անասնաբոյժը Ծուղրութ և միւս գիւղեր գնալով բոլոր կենդանիներին՝ թէ հիւանդ և թէ առողջ, հակաժանտախտային շիճուկով պատուաստել էր։ Ցոյս ունենք, որ շուտով կը վերջանայ»։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Անցեալ շաբաթ Խօջալլու գետով անցնելու ժամանակ մի դիլիժան ջրի հոսանքից շուռ է գալիս, թողնելով իր մէջ 11 հոգուց բաղկացած մի խումբ մարդկանց, որոնք ուղևորվում էին Շուշի։ Դրանց թւում լինում են 1 կին և 5 աղջիկներ։ Վերջիններս զանազան դպրոցների աշակերտուհիներ են, որոնք ամառվայ արձակուրդին շտապել են ծնողների մօտ։ Մինչև գետով անցնելը, մի և նոյն խմբից երկու աշակերտներ, կողմնակի մարդկանց խորհրդով, անցնում են գետի միւս ափը ձիով։ Օրիորդները չեն ցանկանում ձիով անցնել և հետևանքը լինում է վերոյիշեալը։ Սկսվում է օրիորդներին յատուկ ծէծուցը և ծկլթոցը. «помогите! օգնեցէք...» Բարեբաղդաբար, գետի միւս ափից օգնութեան են հասնում վրաններում ապրող կօզակները։ Սրանց օգնութեամբ բոլորն էլ մի կերպ դուրս են գալիս ջրից և հասնում ափը, բայց բաւականին թրջված, ցեխոտված... նոյն վիճակին է ենթարկվել նաև իրանց հագուստը և առհասարակ ամբողջ «բագաժը». որովհետև այդպիսի թրջված դրութեան մէջ չէր կարելի մնալ, կօզակները առաջարկում են իրանց հագուստից։ Երևակայեցէք, ընթերցող, որ «գիմնազիստկա» օրիորդները ստիպված «լայաղ» են անում կօզակների չուխաները հագնել, թուրքի «միթելով» ծածկվել և այլն, և այդպիսով մի կերպ հասնում են գիշերը «ի պատմական քաղաքն Շուշի»։ Կօզակներին, իբրև վարձատրութիւն, տալիս են մօտերը եղած 15 ռուբլին։ Այս բոլորը, ինչպէս տեսնում էք, դեռ լաւ է անցել։ Բայց եթէ ջուրը իր «հունարը» ցոյց տար և դիլիժանը 11 հոգուն և ամբողջ «բագաժը» տանէր, ինչ կը լինէր խեղճերի ծնողների դրութիւնը... Զարմանալի է, որ այդպիսի դէպքերը սովորական երևոյթ են դարձել և կրկնվում են ամեն տարի... Խորհուրդ կը տայինք եկողներին գետերով զգուշութեամբ անցնել»։

—

Բօրչալուի գաւառի ԲՈԼՆԻՍ-ԽԱՉԷՆ գիւղից մեզ գրում են. «Մի շաբաթ է, որ գարնանային օրեր են լինում. արեգակի տաքութիւնից ամբողջ բնութիւնը զարթնել է։ Մեր գետը հանդարտել է և գիւղացիները նոր կամուրջ ձգեցին վրայով։ Սկսվել է աշխատանքը այգիներում և վար ու ցանը, որը նախընթաց տարիներում այս ժամանակ վերջացած էր լինում։ Արդէն սրսկում են այգիներին «պղնձի ծըծմբատ» անուանված դեղը, որին գիւղացիք կո-

չում են «ժանգառ», «գեօղ-դաշ» (Թուրքերէն է և նշանակում է կապոյտ քար»)։ Սրա իւրաքանչիւր մէկ ֆունտի հետ խառնում են 3 վեդրօ ջուր և կէս ֆունտ կիր, որից յետոյ և սրսկում են օրթերը՝ տերև չորացնող հիւանդութեան ազդեցութիւնը ոչնչացնելու և նրանց աւելի զուարթ պահելու նպատակով։ Մինչև այգեքաղը երկու կամ երեք անգամ կը սրսկեն։ Նոյնքան անգամ էլ ծծումը են սրսկում «ժոխիր» անուանված հիւանդութիւնը ոչնչացնելու համար։ Մոխիրը չորացնում է խաղողի հատիկները և տարօրինակ քաղցրութիւն տալիս պտղին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

—

Պատերազմի բեմի ռազմագիտական դրութեան ծանրութեան կէտը առաջվայ պէս դեռ կենտրօնանում է եապօնական այն երրորդ զօրաբանակի վրա, որի հրամանատարն է մարշալ Նոդզուն, որ գործում է Լեաոդունում և կազմում է միացուցիչ օղակ Մանջուրիայում գտնվող Կուրօկիի և Կվանտունում գտնվող Օկուի բանակների մէջ։ Եթէ հաւատանք «Local Anzeiger» թերթին, պատերազմի բեմի վրա գործող եապօնական բոլոր զօրքերի հրամանատարը նշանակված է ոչ թէ մարշալ Նոդզուն, այլ մարշալ Եամագատան, որ մինչև Ռուսաստանի հետ պատերազմը, հինգ-վեց տարի արդէն անյայտութեան էր մատնված, լինելով միայն իբրև անդամ բարձր զինուորական խորհրդի։ Եւ ճշմարիտ, եապօնացիների զգոյշ, հաշված և դանդաղ գործողութիւնների մէջ ցամաքի վրա տեսնվում է աւելի դանդաղկոտ, պաղարիւն և հաւասարակշռված Եամագատայի ձեռքը, քան յախուռն և համարձակ Նոդզուի ձեռքը։ Այդպիսով, եապօնացիները վճռել են, ինչպէս երևում է, յանձնել իրանց ցամաքային զօրքերի գլխաւոր առաջնորդութիւնը աւելի ժողովրդական գեներալներից մէկին, չը նայելով նրա վատառողջութեան (Եամագատան այժմ 66 տարեկան է)։ (Рус. Вѣд.)

Եապօնական զորքերը Պորտ-Արտուրի դեմ։ «Daily Telegraph» լրագիրը հաղորդում է, որ եապօնական երրորդ բանակի երկու դիվիզիաները այս օրերս միացել են գեներալ Օկուի բանակին, որի թիւը պէտք է հասցնվի մինչև 150,000 հոգու։ Պորտ-Արտուրը—յայտնեց նորերս մի եապօնական դիպլոմատ—մեր գլխաւոր նպատակն է, իսկ միացածը մենք թողնում ենք մեր գեներալներին, որոնց մենք ամենևին չենք նեղում գործողութիւնների ազատութեան մէջ։ Նրանք կարող են հանդարտ մշակել և իրագործել իրանց պլանները։ Ինչ վերաբերում է Պորտ-Արտուրին, ամեն մի օրը մեզ համար թանգ է Պետերբուրգից եկող լուրերի պատճառով Բալտիկ ծովի նաւատորմի մասին։

—Եապօնական այն բանակը, որ պաշարում է Պորտ-Արտուրը, տարածվել է Շուան-տայզօու գծից մինչև Զեն-Զեն-Ցձի, բերդից 12—14 մղոն հեռու։ Եապօնացիները հետզհետէ առաջ են քշում իրանց առաջապահ կայանները, որոնք գտնվում են միայն 4 մղոնով հեռու ռուսաց առաջապահ ամրութիւններից, ցամաքի կողմից։ Եապօնացիները սպասում են, որ այն ժամանակ, երբ նրանք կը սկսեն ռմբակոծել Պորտ-Արտուրը ցամաքից, ռուսները կը յարձակվեն իրանց նաւատորմի վրա։ Պորտ-Արտուրի կողմից լսվող պայթիւնները վերագրվում են ծովապետ Վիտգեֆտի ջանքերին՝ մաքրել նաւահանգիստը հրձիգ նաւերի ճնացորդներից, որպէս զի հնարաւորութիւն տայ Պորտ-Արտուրեան էսկադրային դուրս գալ ծովը և կռուել եապօնական նաւատորմի հետ։ (Рус. Вѣд.)

Եապօնիայի ձգտումները։ «Standard» լրագիրը գրում է, որ եապօնական Կոկումին լրագիրը, խօսելով Մանջուրիային սպասող վիճակի մասին, յայտնում է, որ Եապօնիան երբէք չի հրաժարվի իր ձգտումից, որ Մանջուրիան բաց լինի օտարազգիների առևտրի համար և գտնվի մի և նոյն ժամանակ Չինաստանի կառավարչութեան ներքոյ։ Եապօնական առաջին վինիստր Կացուրան յայտնել է եւրօպական լրագիրներից մէկի աշխատակցին, որ թէև այժմ դժուար է որոշել, թէ ինչ նպատակների պէտք է ձգտէ Եապօնիան հաշտութիւն կնքելիս, այնու ամենայնիւ կարելի է ասել, որ չափաւորութիւնը կը լինի Եապօնիայի յատկանշանը պատերազմից յետոյ, ինչպէս էր պատերազմից առաջ։ Հողի աւելացումը՝ Եապօնիայի նպատակը չէ. ինչ վերաբերում է ապագայ դաշնագրի ուրիշ հնարաւոր պայմաններին, նրանք, եապօնական առաջին մինիստրի կարծիքով, համաձայն են գլխաւոր արդիւնաբերական երկիրների շահերի և նպատակների հետ։ (Рус. Вѣд.)

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

Մեր երէկվայ տեսութեան մէջ մենք ցոյց տուինք, որ գործերի վիճակը Թիւրքական Հայաստանում սպառնական է և շատ քիչ մը-խիթարական։ Մեր տեսութիւնը հաստատված մենք տեսնում այժմ «Новое Обозрѣніе»-ի երէկվայ համարում տպված պ. Խանզադէի յօդուածի մէջ։ «Թիւրքական իրականութիւնը—ասում է պ. Խանզադէն—վերջին ժամանակներս ոչ մի մխիթարական բան չէ տալիս։ Մուշի վիլայէթի շրջակայ գիւղերում զգացվում է ուղղակի սով։ Կ. Պոլսի հայոց պատրիարքը և եւրօպական հիւպատոսներից ոմանք յարաբերութեան մէջ մտան այդ առիթով Ելդզի հետ։ Յոյս կայ, որ սուլթանը հնարաւոր օգնութիւնը կը հասցնէ աւերված գիւղերին։ Տեղական հարկահաւաքները աշխատում են անխոնջ և անողոք կերպով։ Լինում են դէպքեր, երբ նրանք հանում են բազարը ծախելու տնային կահկարասիքը և նոյն իսկ տնային գրաստը, որի վրա հիմնված է, կարելի է ասել, ամբողջ գիւղական տնտեսութիւնը։

«Շատերը ենթադրում են, որ շարժման շրջանակը կը լայնանայ, գրաւելով լայն կոհակներով բոլոր վիլայէթները, ուր կայ քրիստոնեայ ժողովուրդ։ Այս ենթադրութիւնը հաստատվում է այն հանգամանքով, որ ոչ հայոց պատրիարքի բանակցութիւնները, ոչ ներկայումս Բիթլիսում գտնվող եւրօպական հիւպատոսների եռանդուն միջամտութիւնը չեն կարողանում ազդել ապստամբների տրամադրութեան վրա և յետ պահել նրանց այնքան վտանգաւոր քայլերից։

«Տրապիզոնում նկատվում է մահմեդական ազգաբնակութեան գրգռումն քրիստոնեաների դէմ։ Այդպէս, օրինակ, նորերս այդ քաղաքի բազմամարդ փողոցներից մէկում երկու կատաղած անձինք կռուում էին. մինը հայ էր, միւսը Թիւրք։ Վերջինը, ստանալով դանակի ուժեղ հարուած, մեռնում է։ Այդ հանգամանքը քիչ մնաց քրիստոնեաների կոտորած առաջ բերէր։ Տեղական իշխանութիւնները միջամտեցին գործին և արիւնահեղ դրամայի առաջն առան։ Ասում են, որ ազդեցիկ քիւրդ շէյխերից մի քանիսը, որոնք ապրում են Տրապիզոնում, իրանց նպատակ են դրել օգուտ քաղել այդ հանգամանքից, իբրև յարմար առիթից, գրգռելու համար մահմեդականներին, որոնք առանց այն էլ զայրացած են Սասունի դէպքերի պատճառով։ Տրապիզոնում դադարել է հասարակական կեանքը։ Առևտուրը բոլորովին կանգ է առել։ Այդ բացատրվում է նրանով, որ հայերը, որոնց ձեռքում կենտրօնանում է տեղական առևտուրը, վախենում են երևալ փողոցներում և նստում են տանը ձեռքերը ծալած։

«Խոր շահեկանութիւնից զուրկ չեն նաև քիւրդ շէյխ Սէյիդ-Ալու սիրաղործութիւնները, որը նպատակ է դրել, ինչպէս և լինի, իսլամութեան դարձնել «Խիզանի գայմագամութեան» զանազան գիւղերում ցրված քրիստոնեաներին։ Նա առանձին հմայք ունի քիւրդերի աչքում և համարվում է նրանց մէջ իբրև սուրբ մարդ։ Սէյիդ-Ալու շրթունքներից դուրս եկած ամեն մի խօսք նուիրական պատգամ է համարվում ամեն մի քիւրդի համար, որ պատրաստ է զոհել ամեն մի բան նրա համար։ Այդ «գայմագամութեան» գրեթէ բոլոր քրիստոնեայ գիւղերը, որոնց թիւը հասնում է 70-ի, դժուար վիճակի մէջ են գրված և չը գիտեն ինչ անել—իսլամութիւն ընդունել, կամ թողնել իրանց բները և բաղդ որոնել ուրիշ պետութիւնների սահմաններում. «Չը նայելով եռանդուն խուզարկութիւններին, ապստամբների գլխաւոր պետը—Անդրանիկ, դեռ չէ գտնված։ Մասնաւոր տեղեկութիւնների համաձայն, որոնք թափանցել են մամուլի մէջ, նա իբր թէ վիրաւորվել է վերջին ընդհարման ժամանակ թիւրքաց զօրքերի հետ։ Բայց այդ լուրը, եթէ հաւատանք արտասահմանեան թղթակիցներին, չարդարացաւ։ Նա շարունակում է առաջվայ պէս գործել և նրա խումբը աճում է, որովհետև խաղաղ բնակիչներից շատերը, որոնք դժգոհ են իրանց վիճակից և թիւրքաց ոստիկանութեան կամայականութիւնից, մեռնում են նրա հետ»։

Խանզադէի այս տեղեկութիւնները, որոնք հաստատվում են և եւրօպական և ռուս լրագիրների յօդուածներով, պարզ ցոյց են տալիս, որ, արդարև գործերի վիճակը Թիւրքիայի հայաբնակ նահանգներում այնքան անմխիթարական է, որ դժուար թէ եւրօպական պետութիւնները ուշադրութիւն չը դարձնեն այս անգամ և մի արմատական միջոց չորոնեն այդ սարսափներին վերջ տալու յանուն մարդասիրութեան և քրիստոնէական քաղաքակրթութեան։

Հ. Ա.

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

31 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գեներալ Խարկեվիչի հեռագիրը գլխաւոր շտաբին մայիսի 30-ից. «Մայիսի 27, 28 և 29-ին Վաֆանգօու կայարանի կողմերում եղած զօրքերի դիրքերի մէջ փոփոխութիւններ չը կան։ Առաջապահ պահակներում մշտական մանր ընդհարումներ են տեղի ունենում։ Եապօնացիների ջանքերը Վաֆանդեան կայարանից հարաւ յետ քշելու մեր պահապան պահակները՝ չէ աջողվում՝ կազակներն են նրանց յետ մղում։ Լեաոդունի արևմտեան ափերում հանգիստ է։ Երբեմնակի եւրևացող թշնամական նաւերն ափերին չեն մօտենում։ Եապօնացիները Սիւեանից առաջ չեն շարժվել և, ստացված տեղեկութիւնների համեմատ, այդ կէտի շրջակայքում ամրանում են։

ԹԱՒՐԻԶ։ Լուր է ստացվել, որ խօլերա է երևացել Համադանում, Թաւրիզից 700 վերստ հեռաւորութեան վրա։ Բժիշկների կարծիքով, կարելի է սպասել, որ նա կը տարածվի և Թաւրիզում։

ԲԱԳՈՒ։ Սև քաղաքում՝ Վարդապետեանի կերօսինի և նաւթաիւղերի գործարանում, աշխատանքների ժամանակ, նաւթատար խողովակի պայթելուց բռնկվեց նաւթի ամբարը. հրդեհն ահագին չափեր ստացաւ և դեռ շարունակվում է։ Այրվեցին նաւթի և իւղերի չորս պահեստներ։ Վնասները պարզված չեն։

ԼՕՆԴՕՆ։ Տանժէրից հաղորդում են մի դաւադրութեան մասին, որի նպատակն է եղել գահընկեց անել սուլթանին։ Դաւադրութիւնը լաւ է կազմակերպված, տարածված է Մարոկկոում ամեն տեղ և օգնութիւն է ստանում շատ ակնառու անձերից։ Սուլթանը տեղեկութիւն ունի դաւադրութեան մասին։ Կարելի է, որ ստիպված լինի Ֆէցը թողնել և գնայ՝ հաւանօրէն՝ Տանժէր։

ԲԵՐԼԻՆ։ Տեղի ունեցաւ կանանց միջազգային կօնգրէսի բացումը։ Բոլոր պետութիւններն ունեն իրանց ներկայացուցչուհիները։ Ճառեր խօսելու պատրաստված կանանց մէջ կան մի քանիսը Ֆինլեանդիայից և մի ռուս կին՝ Պետերբուրգից։

ՕՐԵՕԼ։ Օրեօլի նահանգական խորհուրդը ցանկութիւն յայտնեց, որ կազմվեն յատուկ գիւղական ժողովներ գիւղացիների հողերից օգտվելու, գիւղամասի կազմի մէջ հարկատու դասակարգից անձեր ընդունելու, որոնք այնտեղ անշարժ կայքեր ունենան և գիւղամասերի դատարանի պահպանութեան մասին, խոստովանվելով վերջինիս վերանորոգութեան անհրաժեշտութիւնը։

1 յունիսի

ԲԷՅՐՈՒԹ։ Վախճանվեց գվարդիական զօրքերի շտաբի գլխաւոր գեներալ Վասմունդը։

ՍՏՕԿՀՕԼՄ. Ծովային պատերազմական փորձերի ժամանակ մի հակաականաւ թաղվեց ծանծաղուտի մէջ Ստոկհոլմի մօտերը։

ԼՕՆԴՕՆ. «Դէյլի Մէյլ»-ի թղթակիցը հաղորդում է գեներալ Կուրօկիի գլխաւոր բանակատեղից, որ եապօնացիները շինել են ռազմական երկաթուղի Եալուից Ֆինխուանչէն։

ՆԻԻ-ԶԺՈՒԱՆ։ Մօտ երկու հազար ռուսական հետեակներ, որ եկել են Զայչժօուի կողմից, այս առաւօտ անցան Նիւ-Զժուանով՝ ինտենդանտութեան և հիւանդանոցի մեծ պաշարներ հետները։ Ռուսները թողին Նիւ-Զժուանից 8 մղոն հարաւ եղած դիրքերը։

ԲԵՐԼԻՆ։ Ս. Աթոռը վերջին ժամանակներս եռանդով աշխատում է, որ Հաագայի միջնորդ դատարանի կազմի մէջ ընդունվի Վատիկանի ներկայացուցիչը, մի բան, որ չընդունվեց այդ դատարանի հիմնարկութեան ժամանակ Իտալիայի բողոքի պատճառով։ Իսկ այժմ դրա դէմ է դուրս եկել ոչ միայն Իտալիան, այլ և Ֆրանսիան, այնպէս որ Վատիկանի ցանկութիւնը այս անգամ էլ չը կատարվեց։

ՊԵՐՄ։ Նահանգական խորհուրդը ցանկալի գտաւ գիւղացիների հողերից օգտվելու գործերի համար յատուկ ժողովներ, գիւղական հասարակութիւնների բաժանումը հողայիններից, գիւղամասերի սահմանների որոշումը և գիւղամասերի դատարանի պահպանութիւնը։ Խորհուրդը ցանկալի է գտնում գիւղամասերի դատաւորների իրաւասութիւնը լայնացնել քաղաքացիական գործերի վերաբերութեամբ և կրճատել քրէական գործերում. նա ցանկալի է համարում, որ այդ դատարանն ունենայ քաղաքացիական առանձին օրէնսգիրք, առանձին պատժական օրէնսդրութիւն և քաղաքացիական ու քրէական դատավարութեան մանրամասն կանոններ և անհրաժեշտ է գտնում թեթևացնել համայնականից մասնաւորին անցնելը, սահմանափակել գիւղացիների հողաբաժինները։

ԿԻԵՎ։ Լև Բրոդսկին նուիրել է 50,000 բուբլի խրօնիքական-հիւանդ երեխաներին խնամելու հիւանդանոցների ընկերութեան օգտին։

1 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Հրատարակված է հետևեալ բարձրագոյն ուկազը. «Անհրաժեշտ դատելով պատերազմական դրութեան և ուժեղացրած կազմակերպութեան մէջ դնել զօրքերի մի քանի պահեստամասերը Կազանի, Մոսկվայի և Կիեվի զինուորական շրջաններում, նոյնպէս և զօրքերի մի քանի յատուկ բաժինները, պատերազմական-բժշկական հիմնարկութիւնները և բանակի պահեստի բատալիոնները՝ Մենք հրամայեցինք Մեր ուկազով, տրված ներկայ թուից զինուորական մինիստրին, այժմ և եթ կատարել Մեր ցուցումներով այս կարգադրութեան համեմատ բոլոր պէտք եղածը։ Դրա հետ միասին հրամայում ենք. I կոչել իսկական ծառայութեան, համաձայն այդ դիպուածի համար զօրակոչի գոյութիւն ունեցող կանոնների մասնաւոր փոփոխութեան, պահեստի զօրքից զինուորների պէտք եղած թիւը հետևեալ գաւառներից. ա) Կազանի զինուորական շրջանից. Պենզայի նահանգի—Պենզայի, Գորոդիշչենսկի, Իսսարի, Կերենսկի, Կրասնօսլոբոդի, Մօկշանի, Նարովչատի, Նիժելեմսվի, Սարանսկի և Զեմբարի. Պերմի նահանգի—Կրասնօուֆիմի. Սիմբիրսկ նահանգի—Սենգիլէյի. Սամարայի նահանգի—Սամարայի, Բուգուրուսլանի, Բուգուլմինսկի, Բուզուլուկի, Նովօուզենսկի և Ստաւրոպոլի. Սարատովի նահանգի—Սարատովի, Բալաշովի և Ատկարի. Օրենբուրգի նահանգի—Օրենբուրգի և Վերխնեուրալի. Ուֆիմի նահանգի—Ուֆիմի, Զլատոուստի, Մենզելինսկի և Ստերլիտամակի. բ) Մոսկվայի զինուորական շրջանից. Մոսկվայի նահանգի—Բրոնիցկայի, Կոլոմենսկի, Սերպուխովի և Բոգորոդի. Տամբովի նահանգի—Տամբովի, Կիրսանովի, Կոզլովի, Մորշանի, Սպասսկի, Տեմնիկովի և Շացկի. Վլադիմիրեան նահանգի—Ալէքսանդրովսի և Պոկրովսկի. Վորոնեժի նահանգի—Վորոնեժի, Բոբրովսկի, Զեմլեանսկի և Նիժնեդեվիցկի. Օրլովսկի նահանգի—Բոլխովսկի, Ելիկցու, Լիվնիսկու և Մցենսկի. Բեազանի նահանգի—Զարայսկի, Սապոժկովսկու և Սպասսկու. Տուլայի նահանգի—Վենեվսկու, Եպիֆանսկի, Կրապիվենսկու և Զերնսկու, և գ) Կիեվի զինուորական շրջանից. Խարկովի նահանգի—Ախտիրի, Վոլչանսկի և Լիբեդինսկի. Կուրսկի նահանգի—Շչիգրովսկի, Տիմսկի, Բելսկի և Գրայվորոնի։ II Իսկական ծառայութեան կոչել կայսրութեան սահմաններում ապրող՝ պահեստի բանակի այն բոլոր օֆիցէրներին, որոնք, գոյութիւն ունեցող բաշխման համեմատ, նշանակված են նախապէս լրացնելու այն զօրքերը և հիմնարկութիւնները, որոնք այժմ պատերազմական դրութեան և ուժեղացրած կազմակերպութեան մէջ են դրվում, նոյնպէս և հարկը պահանջած չափով՝ այն զինուորներին, որոնք նախապէս նշանակված են՝ համաձայն նոյն բաշխման՝ փոխարինելու նոյն զօրքերում և հիմնարկութիւններում օֆիցէրական և այլ պաշտօնները։ III Վերևում հաշված գաւառներից մի քանիսում, բացի պահեստի զօրքերին կոչելուց, ձիերի զինուորական ծառայութեան համաձայն՝ ներկայացնել ձիերի հարկաւոր թիւը, համաձայն այն կարգաւորութեան, որ առաջին կէտում յիշված գործող կանոնների մասնակի փոփոխութեանը ենթարկվել է։ Կառավարիչ Սենատը թող անէ սրա գործադրութեան համար պահանջվածը»։ Իսկականի վրա Նորին Կայսերական Մեծութեան Սեփական ձեռքով ստորագրվեն է։ «ՆԻԿՕԼԱՅ»։ Ցարսկօէ Սելօում, 1904 թւի մայիսի 27-ին։

ԵՎՊԱՏՕՐԻԱ։ «Ռօսսիյսկի» փոխադրող ընկերութեան մարտա-ապրանքատար շոգենաւե-

ը յունիսի 15-ից կը մտնեն Եվպատորիա՝ էժանացրած սակագնով.—Պարիզից եկաւ Լուի-Դրեյֆուս և Ընկերութեան կառավարիչ Սիմոնը, հացի արտահանութիւնն ընդարձակելու համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Զինուորական խորհուրդը վճռեց Տաշկենտի երկրորդ Օրենբուրգեան կադէտների կորպուսի պատրաստական դպրոցը վերափոխել կադէտների կորպուսի 300 հոգի դիշերօթիկների համար՝ մի պատրաստականով և 7 հիմնական դասարաններով և կոչել Տաշկենտի կադէտների կորպուս։ Վերափոխումն սկսել 1904/5 թուից։—Հրատարակված են հետևեալ Բարձրագոյն ուկազները. մինիստր-բէղրդէնտին Սաքսէն-Վայմարի մեծ հերցոգի մօտ՝ իսկական պետական խորհրդական Պրոզորին հրամայված է լինել արտակարգ դեսպան և լիազօր մինիստր Բրազիլեան Նահանգների կառավարութեան և Արգենտինայի և Ուրուգվայի հասարակապետութիւնների մօտ։ Բրազիլիայի Նահանգների կառավարութեան մօտ արտակարգ դեսպան և լիազօր մինիստր իսկական պետական խորհրդական Շպէյէրին հրամայված է լինել արտակարգ դեսպան և լիազօր մինիստր պարսկական արքունիքի մօտ։

ԳՕՈՒԲԱՆՅԻ։ (Ռէյտէր)։ Եապօնացիների կողմից իբր լրտես Պօրտ-Արտուր ուղարկված չինացին, որը մի շաբաթ առաջ փախել էր, մայիսի 30-ին ձերբակալվեց Նիւ-Չժուանում։ Նա ասում է, որ ռուսները ցերեկ-գիշեր եռանդով աշխատում են նաւերը, ուղղելու վրա, յուսալով գործը վերջացնել երկու շաբաթում։ Զորս կրէյսէրներ, որոնց թնդանօթներն ուղղված են դէպի ցամաքը, ցամաքային պաշտպանութեան մէջ մասնակցելու համար, կանգնած են Ոսկէ աւոի մօտը։ Նաւահանգստի ամէմուտքը մաքրված է։ Պօրտ-Արտուրի նանշանաւոր չինացուն՝ Չիֆէնգաուին պատկանող ջրաղացը՝ աղում է հացահատիկներ։

ՏՕԿԻՕ։ (Ռէյտէր)։ Տօգօն հաղորդում է, որ Եապօնական նաւատորմի մի մասը նկատել է մայիսի 28-ին Տալիէնվանի ծոցում ռուսական 4 հակառականաւեր։ Նրանց փախցրին Պօրտ-Արտուր։ Տալիէնվանի ծոցում մօտ 70 ական ոչնչացված են։ Ոչնչացված են 30 լողացող ականներ։

ՏՕԿԻՕ։ (Ռէյտէր)։ Տօգօն հաղորդում է, որ Կայիպինգի ռմբակոծութեան պատճառով՝ 3000 ռուսներ թնդանօթներով թողին Ինկօուն։

ԳԵՆԵՐԱԼ ԿՈՒՐՕԿԻԻ ԳԼԽԱՒՈՐ ԲԱՆԱԿԸ։ (Առանց թւի)։ Ֆուղանի վրայով ստացված հեռագիրը հաղորդում է, որ պատերազմական բեմի վրա ոչինչ նոր բան տեղի չէ ունեցել։ Առաջաւոր պահակների վրա կռիւներ տեղի ունեն ամեն օր անշան կորուստներով։ Աջողութիւնը, կարծես, այդ կռիւներում եապօնացիների կողմն է եղել։ Չինացիները գիշերը կարտում են հեռագրաթելերը։

ՆԱԳԱՍԱԿԻ («Ռէյտէր»)։ Հեռագրական հաղորդակցութիւնը Կորէայի և Եապօնիայի միջև նորից բացված է։ Եապօնական կառավարութիւնը կրկին ուղղակի յարաբերութիւնների մէջ է գտնվում բոլոր զօրասիւնների հրամանատարների հետ։ Առանձին զօրամասերը միացրված են դաշտային հեռագրաթելով։ Ռուսների շարժումների մասին տեղեկութիւնները հաղորդվում են մէկ գեներալից միւսին։

ԼՕՆԴՕՆ։ («Ռէյտէր»)։ Համայնքների ժողով։ Պետական-քարտուղար Բրոդրիկ բացասական կերպով պատասխանեց այն հարցասղումին, թէ արդեօք ճիշդ է այն տեղեկութիւնը, որ աւղանական էմիրը հրաժարվում է իւրաքանչիւր տարի նրան վճարվող 40,000 ֆունտից և որ Աւղանիստան է ուղարկվում խաղաղ միսիա, նման նրան, որ ուղարկված է Լիասսա։

ՐԻԳԱ։ Լիֆլեանդական փոխադարձ ապահովագրութեան ընկերութիւնը սկսեց ապահովագրել հունձը։ Ապահովագրվում է կալուածքի տարեկան ամբողջ բերքը։

ՊԱՐԻԶ։ Պատգամաւորների ժողովը ընդունեց երկամեայ զինուորական ծառայութեան վերաբերեալ օրէնքի նախագծի 12-դ յօդուածը։

ԲԷՐՆ։ Ազգային ժողովի նիստի բացման ժամանակ նախագահը հաղորդեց ռուսաց դեսպանի կեանքի դէմ յանցաւոր փորձ անելու մասին և մատնացոյց արեց շվէյցարական ժողովրդի զայրոյթի և վրդովմունքի մասին, որի մասին արդէն հաղորդվեց ռուսաց կառավարութեան։

ՏԱՆԺԷՐ։ Անգլիական դեսպանի հաղորդագրութեան համաձայն, սուլթանը կատարել է Բայսուլլա աւազակի պահանջները։ Ցոյս ունեն, որ Բայսուլլա այժմ գոհ կը լինի և գերիները ազատ կը թողնվեն։

ԼՕՆԴՕՆ։ («Ռէյտէր»)։ Վերջին կարգադրութիւնների համաձայն, թագաւորը յունիսի 10-ին ուղևորվեց Կիլ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺ. Վ. ԱՐԾՐՈՒՆԻՆ

Անցեալ տարիների նման կընդունէ հիւանդներին կովկասեան հանքային ջրերում—ՊԵԱՏԻԳՕՐՍԿՈՒՄ, բգի, բի և ակաՒՇի հիւանդութիւնների համար։ Պեատիգօրսկ, Верхній бульваръ, д. Крымъ-Гирея. (Հ. ջ.) 5—10

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ

Ամառվայ ընթացքում սկսած յունիսի մէկից ընդունում է Ալէքսանդրօպոլում մանաւորապէս սիֆիլիս, սորթու, վիներական և վիրաբուժական ախտ ունեցող հիւանդներին. Պուշկինսկի փողոց (Пушкинская ул. № 59) սեփական տուն, № 59. Հ. Հ.

ԲԺՇԿԱՊԵՏ
ՄԻՆԱՍ ՄՈՒՐԱԴԵԱՆ

Նախընթաց տարիների նման մայիսի 10-ից կընդունէ հիւանդներին Կովկասի հանքային ջրերում, Պեատիգօրսկում, Ելիզավետինսկի փողոցում (ռուսաց Սօբօրի դիմաց) տ. Արբիպովի։ մ. 16,18,21,23,25,27,29,30, յ. 2,4,6,13 9—12

ՎԻԵՆՆԱ. ԲԺ. Պ. Մ. ԱՓՐԻԿԵԱՆ

Կազմում է խորհուրդներ տեղիս մասնագետ-պրոֆէսօրների հետ Ռուսաստանից եկող հիւանդների համար։
Հասցէն Wien, Spiegelgasse, 3, IVstock.
36—50

Լոյս տեսաւ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՍԱՅԵԱՆԻ
ԱՐԲԵՅՈՂԻ ՁԱՏԻԿԸ
պատկեր—գինը 3 կոպ.։

Դիմել գրավաճառներին։ Հեղինակին դիմողները 20 լուբլուց աւելի պահանջով կը ստանան 33% զիջում։ Առանց կանխավճարի չը նիմել։ Հասցէն—Թիֆլիս, Հալաբար, Լազարևսկայա փող. № 49։ (Հ. ու. Կ.) 3—3

ԿՐՕՆԻ ԴԱՄԱԳՐԵՐ

		Ր.	Կ.	
Աշակերտաց համար				
1. Դասատետր կրօնի I տարի		—	25	25% զ.
2. » » II »		—	20	20% զ.
3. » » III »		—	30	
4. Հին-ուխտ (ընդարձակ)		—	45	40% զ.
5. » (համառօտ)		—	35	
6. Նոր-ուխտ		—	40	
7. Գործք առաքելոց		—	40	
Ուսուցչաց համար				
8. Ուղեցոյց (մեթոդիկայ) հին-ուխտի		1	75	35% զ.
9. Ուղեցոյց (մեթոդիկայ) նոր-ուխտի		2	5	
10. Ուսուցումն քրիստոնէական կրօնի Դ.		1	50	40% զ.
11. Ուսուցումն քրիստոնէական կրօնի Ե.		—	50	

Ցանկացողները կարող են դիմել հետևեալ հասցէով.
1) Тифлисъ, священнику С. Саакянцъ, Коммерческое училище.
2) » Книжный магазинъ «Гуттенбергъ»
3) » » «Центральный».

Դասագրքերիս պահեստը ամառս գտնվում է պ. Ալէքսանդր Ամիրաղեանցի մօտ (Карвансарай Тамамшева мануфактурный магазинъ А. Амирагова).

Ցանկացողները նրանից ևս կարող են պահանջ անել։

Սահակ քահ. Սահակեանց
Ն. ա. օ. յլ.—օ. օր-մէջ ս. ա. օ. 5—66

Լոյս տեսաւ
ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ
ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ
Հատոր առաջին. 1865—1871.
Գինն է 1 rուբլի.

Առաջին հատորի մէջ զետեղված են այն խոշոր ու մանր յօդուածները, որոնք լոյս են տեսել մինչև «Մշակ» լրագրի հրատարակութիւնը։ Այդ յօդուածները վերաբերում են 1865—1871 թուականների շրջանին և տպված են եղել մասամբ «Մեղու Հայաստանի» լրագրում, իսկ մասամբ «Հայկական Աշխարհ» ամսագրում։

9—10 Դիմել «Գուttենբերգ» գրախանութը։

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԸ

յայտնում է պ.պ. անդամներին և կանդիդատներին, որ նրանց ընտանիքները, համաձայն կանոնադրութեան § 17-ի կը թոյլատրվեն ժողովարանի ամառնային շինութիւնը որոշված կօնտրմարկաներով, որ տրվում են ժողովարանի գրասենեակում ամեն օր երեկոյեան ժամը 9-ից մինչև 11-ը։ Հ. ո. Կ. 1—3

Մի անձն, որ երկար ժամանակ վարել է ընկերութիւններում գործավարի և քարտուղարի պաշտօններ, յանձն է առնում վարել այդ պաշտօնները, նոյնպէս և սրբագրիչի պաշտօն թերթերի և գրքերի։ Համաձայն է գնալ այդ պաշտօններով և գաւառները։
Հասցէ՝ Աւճալեան փողոց № 38. բնակարան № 4. Մկրտիչ Պապովեան, 5—5

Լոյս տեսաւ
ՊԵՐՃ ՊՈՕՇԵԱՆՑԻ
ՀԱՑԻ ԽՆԴԻՐ
վէպը, երկրորդ տպագր., գինն է 1 ր. 50 կ.
Ճանապարհածախսով 1 ր. 70 կ.
ՍՕՍ ԵՒ ՎԱՐԴԻԹԵՐ
վէպը, երրորդ տպագր., գինն է 1 ր. 20 կ.
Ճանապարհածախսով 1 ր. 45 կ.
Տպագրվում են՝ Պոօշեանի «Շահէն» և Տ. Եժի «Լուսադէմին».
Դիմել՝ Баку. Книжн. маг. С. Д. Арутюнова. (ա. օ) 25—25

Ասիաբադի կանանց բարեգործական ընկերութեան մանկական պարտէզի համար, հարկաւոր է մի դիմնազիաւարտ, հմուտ վարժուհի, ծանօթ ֆրեբելեան մեթոդին։ Պայմանների մասին դիմել՝ Асхабадъ—Мамиконьянцъ. 5—6

Կենտրոնական գրավաճառանոցում
վաճառվում են հետևեալ նոր գրքերը՝

Առաքելեան Հ., Անգլիայի քաղաքական և հասարակական կեանքը, Թիֆլիս, 1904 թ. գ. 15 կ.
Բուդուղեան բժ. Ա., Մտերմական խորհուրդներ պատանիներին (օնանականութեան դէմ և այլն), Թիֆլիս 1904 թ. գ. 20 կ., Ուր ծախվում են այս բժշկի միւս գրքերն ևս։
Մէնդիս պրօֆ., Կրօնի պատմութիւնը, նախնական հաւատալիքների նկարագիրը և կրօնական մեծ սիստէմների բնոյթը, Թիֆլիս 1904 թ. գ. 1 ր. 25 կ.
Սաթունեան Ն. և Զանուսեան Գ.., Ոստիկ, հայ կանանց ժողովածու Գ. Զանչեանի յիշատակին, Աղէքս. 1904 թ. գ. 70 կ.
Սմբատով Ա. իշխ., Դաւաճանութիւն, դրամատիկական լեգենդա Վրաստանի անցեալից 5 գործող., Թիֆլիս 1904 թ. գ. 50 կ.
Վրձին (Ա. Քալանթար), Մանրանկարներ, հատ ա. և բ., Թիֆլիս 1903 թ. գ. 1 ր. 50 կ.
Ղազարեան Գ., Մեղուաբուծութիւն, նկարներով, Վաղարշապատ գ. 50 կ.
Մելիք-Շահնազարեան Կ., Վազի մշակութիւնը, պատկերազարդ, Թիֆլիս գ. 1 ր.
Շանթ, Դերասանուհին—40 կ., Դարձ—40 կ., Վիրժին—60 կ. և Երազ օրեր—40 կ.
Պոօշեան Պ., Սօս և Վարդիթեր, վէպ, գ. տիպ, Բագու գ. 1 ր. 20 կ.
» Յունոն վիպակ Թիֆլիս գ. 1 ր.
Դիմել՝ Въ Тифлисъ, въ Центральную Книжную Торговлю. (երք.) 1—5

Բաներ գրականութեան եւ արուեստի
Բ. ԳԻՐԲ

Ադոնց, Ն. *—Շանթ, Լ. Ես-ի մարդը, դրամա հինգ արարով։—Ահարոնեան, Ա. Մահը։—Առանձար, Տասը տարի հաքը։—Փափազեան, Վ. Արդար թէ մեղաւոր։—Օտեան, Ե. Համբարձում աղա։

Իսահակեան, Ա. 1. Ի՞նչ ես գաղտում։—2, Մենակ մանկութեան օրերն են անոյշ։—Տիրանեան, Վ. Հանգրւանը։—Յովհաննիսեան, Յ. 1. Լուսաւորչի կանթեղը, 2. Դարեր անցուցինք։—Եարճանեան, Ա. Հոգեվարքին ջաները—1. Հոգիս, 2. Արիւն։—Անանեան, Ռ. 1. Աշնանային խոհեր, 2. Հոգ չէ, ընկերներ։—Թէքէեան, Վ. 1. Աշնան իրիկուն, 2. Խոստովանանք, Գարուն, Հեթանոս սէր։—Մալէզեան, Վ. Անհաւատը։—Կիւրճեան, Մ. Երգւորեակները։—Համբարձումեան, Ն. 1. Դարբին, 2. Կայծակն ինձ նետ։—Թումանեանց, Յար. Աղջիկ, երնէկ ալ լինեմ։—Ադոնց, Ն. Գրական նշմարներ։ Լեզուական ուղղագրական։—** Արևմտեան հայոց արդի գրականութիւնը։—Աղբալեան, Ն. Երգ ու վերքից յետոյ։—Մուրէյ, Գ. Մի հայ փորագրիչ։ Էդ. Շահին։—Մ. Նալբանդեանցի մի անտիպ գրութիւնը—Կայպակ։

Պատկերներ և քանդակ

Բալասարիէրի, Լ. «Բեթհովէն»։—Մարտէն, Հ. «Զարդական պանս» I III և II։—Ագաշ, Ա. «Օրէնք»։—Ռիթ, Պ. «Կորուսեալ դրախտ»։—Թոմա, Հ. «Մենաւոր ասպետ»։—Կաուլբախ, Ֆ. «Գուտենբերգ»։—Զուլօագա, Ի. «Գայթակղութիւն»։—Բենար, Պ. «Ուրժան»։—Ֆալգիէր, Ա. «Պարուհի»։—Շահին, Է. «Տիկ. Ֆրանսի պորտրետը»։—Սուրէնեանց, Վ. «Հոփոսիմէ և Գայիանէ»։—Մահտեսեան, Է. «Անապատ ափ»։—Կաղէսեան, Յ. «Փոթորիկ Մարմար ծովում»։—Թադէոսեան, Ե. «Ընթերցանութիւն»։

Ա. և Բ. գիրքը միասին արժէ 4 ր., ամեն մէկը առանձին—2 ր. 50 կ.։

Դիմել՝ Григорію Аристакесянцъ С. Петербургъ. Басейная ул. 33. և Թիֆլիս՝ «Гутенбергъ» գրավաճառանոց։ 3—3



ԿՐԿԻՆ ԿԱՐՃ ԺԱՄԱՆԱԿԱՄԻՋՈՑՈՒՄ
70% ԽՆԱՅՈՂՈՒԹԻՒՆ 70%



*Վերջին ժամանակի մրցումը, պահեստում եղած ապրանքների մեծ պաշարը և ֆիրման տարածելու ցանկութիւնը մեզ դրդում է առաջարկել չը տեսնված էժան գնով, ՄԻԱՅՆ 5 Ր. 90 Կ.-ՈՎ, ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՁԱԽԲԸ ՀԵՏԸ ՄԻԱՍԻՆ՝ հետևեալ օգտակար և արժէքաւոր 8 իրերը։ 1) Սև ագատաագոյն պողպատէ տղամարդկանց կամ կանանց ժամացոյց վերադիր ոսկուց (հատատապէս ոսկեջրած՝ կրակով), շատ ճաշակաւոր, ամուր մեքանիզմով և 6 տարվայ գարանտիայով։ 2) Շղթայ նոր ոսկուց զօծված կամ նիկելից կամ կանանց վզի։ 3) Բրելոկ նոր ոսկուց—«Կողմնացոյց» կամ «Բինօկլ» պիկանտ տեսարաններով, կամ ուրիշ։ 4) Զամբեռ քսակ ժամացոյցը փչանալուց զերծ պահելու համար։ 5) Գրպանի ելեքտրական ֆօնար՝ զօրեղ լոյս տուող կամ 56 պրօբէ ոսկէ մատանի կամ կաշուէ պorsսիգար կամ թէ «Իմպերիալ» Usերէսօկոպ 25 պատկերներով. 6) Լաւ արտասահմանեան պողպատից գրչահատ կամ ծխամորճ անվնաս ծխելու համար շինված ծալովի մկրատ։ 7) Կաշվէ դրամապանակ՝ մի կտորից, 7 բաժանմունքով, մեքենական փականքներով, անուան, հայրանուան և ազգանուան համար կնիքով։ 8) Թղթապանակ արտասահմանեան կաշուց՝ այցետոմսերի, թղթերի և դոկումենտների համար կամ մի զոյգ ոսկէ օղեր 56 պրօբի քարերով, կամ մեխենական ինքնաշարժ այրիչ «Էդիսըն« (լիովին բռնուէ լուցկու տեղը)։ Այս բոլորն ուղարկում ենք ձրի պրեմիայով, առանց կանխավճարի, վերադիր վճարով՝ միայն 5 ր. 90 կ. ճանապարհածախսով։ Ժամացոյցները ծածկով լինելիս՝ 1 ր. 50 կ. աւելի թանգ։ Պահանջներով դիմել. глав. складъ часовъ Торгов. Дома Ш. Якобсона, Варшава. Твердая № 22/225 (20 մ. յ. 2, 14, 26) 2—4

ՆԵՐԱՐԿՈՒՄՆ ՄԱՏԻԿՈՒ
(INJECTION AU MATICO)

Գրիմօ և ընկ. դեղագործների թոյլ է տրված Ռուսաստանում։ Այս հեղուկի մէջ շահագործված են պերուանեան Մատիկօ բոյսի յատկութիւնները, մի բոյս, որ զարմանալի կերպով բժշկում է հոնորէյը (սերմնաթափութիւն) և մի քանի տարվայ ընթացքում համաշխարհային հռչակ է ստացել։ Կարճ ժամանակում բուժում է ամենազօրեղ սերմնաթափութիւնները։
Պարիզ, 8 Rue Vivienne և գլխաւոր դեղատներում։
(2, 17) 5—19

Дозволено Цензурою. Тифлисъ, 1-го іюня 1904 г. Տպարան «ՀԵՐՄԷՍ» Типографія «ГЕРМЕСЪ» С. Назарянца, Мих. пр. № 81